



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Ռ Ե Կ Տ Ո Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 29 » դեկտեմբերի 2012 թ.

№ 317-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 4-ի N 995-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ալկադեմիայի (այսուհետ՝ Ալկադեմիա) կանոնադրության 17-րդ կետի և 19-րդ կետի «Ժէ» ենթակետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ալկադեմիայի ռազմավարական ծրագրի մշակման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հիմք՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ալկադեմիայի գիտական խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի (արձանագրություն N° 99) որոշումը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2013 հունվարի 1-ից:

Ա.ԼՈՔՅԱՆ

Հավելված

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հնգամյա ռազմավարական ծրագրի նախագծի մշակման, շահագրգիռ անձանց իրազեկման, ստացված դիտողությունների ու առաջարկությունների քննարկման, ամփոփման, ինչպես նաև հավանության արժանացման և հաստատման ընթացակարգը:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 4-ի N 995-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

3. Ակադեմիայի հնգամյա ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) Ակադեմիայի գործունեության արդյունավետությունը գնահատելու հիմնական ծրագրային փաստաթուղթն է:

Ծրագրով սահմանվում են Ակադեմիայի հիմնական նպատակները, դրանց հասնելու միջոցառումները: Ծրագիրը հաստատում է Ակադեմիայի Խորհուրդը:

2. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄԸ

4. Ծրագրի նախագծի մշակումը իրականացնում է սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով ձևավորված աշխատանքային խումբը:

5. Աշխատանքային խմբի անհատական կազմը հաստատում է Ակադեմիայի ռեկտորը՝ գիտական խորհրդի համաձայնությամբ:

Աշխատանքային խմբի կազմում ընդգրկվում են վարչական և գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնաօժանդակ և այլ կազմի աշխատողներ, ինչպես նաև ուսանողներ:

6. Նախագծի մշակման աշխատանքները կատարելու համար կարող են ներգրավվել նաև արտաքին շահառուներ, պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության և կրթության առաջատար մասնագետներ:

7. Ակադեմիայի ռեկտորի հրամանով ամրագրվում են հետևյալ դրույթները՝

1) աշխատանքային խմբի գործունեության ժամկետների և պայմանների մասին,

2) աշխատանքային խմբի անդամների և ղեկավարի մասին,

3) աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու պարտականության և այլն:

8. Ծրագրի նախագծի հաստատմանը նախորդող գործընթացի փուլերն են.

1) Ծրագրի նախագծի մշակում,

2) աշխատանքային խմբի կողմից նախագծի ներկայացում Ակադեմիայի գիտական խորհրդի համաձայնեցմանը:

Ակադեմիայի գիտական խորհուրդը Ծրագրի նախագիծը կարող է վերադարձնել աշխատանքային խմբին՝ խմբագրելու, թերությունները վերանայելու կամ լրամշակելու հանձնարարականով:

3) աշխատանքային խմբի կողմից նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպում,

4) Ծրագրի նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփում,

5) լրամշակված Ծրագրի նախագծի ներկայացում Ակադեմիայի գիտական խորհուրդ՝ քննարկման համար, Ակադեմիայի գիտական խորհուրդի կողմից նախագծի ուղարկում աշխատանքային խմբին (լրամշակման անհրաժեշտության դեպքում),

6) Ծրագրի նախագծի՝ Ակադեմիայի գիտական խորհրդի կողմից հավանության արժանացումը,

7) Ծրագրի նախագծի ներկայացումը Ակադեմիայի Խորհուրդ,

8) Ծրագրի նախագծի հաստատումը Ակադեմիայի Խորհրդի կողմից (տե՛ս սխեմա):

9. Ծրագրի նախագիծը դրվում է շրջանառության մեջ՝ դրա վերաբերյալ արտաքին և ներքին շահառուներից կարծիքներ ստանալու նպատակով:

10. Ծրագրի նախագիծը շրջանառության մեջ դնելու առաջնային փուլը այն շահագրգիռ բոլոր պետական մարմիններին ուղարկելն է:

11. Ակադեմիայի գիտական խորհուրդն ինքն է որոշում շահագրգիռ մարմինների շրջանակը:

3. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

12. Ծրագրի նախագծի մշակման գործընթացին հասարակության մասնակցության ապահովումը հետապնդում է մի շարք նպատակներ, մասնավորապես.

1) խթանել Ակադեմիայի Ծրագրի նախագծի մշակման գործընթացում Ակադեմիայի և հասարակության միջև կառուցողական երկխոսությունը,

2) լսել համապատասխան ոլորտում գիտելիքներ և փորձ ունեցող շահագրգիռ կողմերի կարծիքներն ու առաջարկությունները,

3) դեռևս Ծրագրի նախագծման փուլում վեր հանել և լուծում տալ հասարակական այն մտահոգություններին, որոնք հետագայում կարող են խոչընդոտել Ծրագրի գործնական իրականացմանը:

13. Հանրային քննարկումների իրականացման սկզբունքներն են հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը:

14. Հանրային քննարկումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է, եթե Ակադեմիայի գիտական խորհուրդը չի սահմանել առավել երկար ժամկետ:

15. Հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով Ակադեմիայի ինտերնետային կայքում հրապարակվում է Ծրագրի նախագիծը:

16. Ֆիզիկական և իրավաբանական անձինք ինտերնետային կայքում հրապարակված Ծրագրի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները՝ դրանք՝

1) ուղարկելով համապատասխան էլեկտրոնային հասցեով կամ

2) գրավոր ներկայացնելով Ծրագրի նախագիծը մշակող աշխատանքային խմբին:

17. Ծրագրի նախագիծը մշակող աշխատանքային խմբի նախաձեռնությամբ հանրային քննարկումները կարող են իրականացվել նաև հանրային կամ շահագրգիռ անձանց հետ

հանդիպումների, բաց լսումների, քննարկումների, ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով:

4.ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ, ԱՄՓՈՓՈՒՄԸ

18. Ծրագրի նախագծի առնչությամբ ներկայացված դիտողությունների ու առաջարկությունների բովանդակությունը և դրանց քննարկման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունն իր արտացոլումն է գտնում ամփոփաթերթում:

19. Ծրագրի նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթում ներառվում են.

- 1) առաջարկությունը ներկայացրած կազմակերպության անվանումը,
- 2) գրության օրը, ամիսը, տարին և համարը,
- 3) դիտողությունների և առաջարկությունների ամփոփ բովանդակությունը,
- 4) Ակադեմիայի կողմից դիտողությունների և առաջարկությունների ընդունման կամ

չընդունման մասին նշում:

20. Ամփոփաթերթում կարող են չներառվել տեխնիկական և խմբագրական բնույթի դիտողությունները և առաջարկությունները: Նույնական առաջարկությունների և դիտողությունների առկայության դեպքում դրանց կրկնակի ներառումը ևս անհրաժեշտ չէ:

21. Նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների ընդունման դեպքում ամփոփաթերթում համապատասխան առաջարկության դիմաց նշվում է «*ընդունվել է*» բառը:

Դիտողությունների և առաջարկությունների չընդունման դեպքում ամփոփաթերթում համապատասխան առաջարկության դիմաց նշվում է «*չի ընդունվել*» և տրվում է չընդունման հիմնավորումը:

Դիտողությունների և առաջարկությունների մասնակի ընդունման դեպքում նշվում է «*ընդունվել է մասնակի*» և տրվում է դրույթի փոփոխված բովանդակությունը կամ նշվում դիտողության արդյունքում կատարված փոփոխության բնույթը: Դիտողություններ և առաջարկություններ չլինելու դեպքում նշում է կատարվում առաջարկությունների բացակայության մասին:

22. Եթե պետական մարմնի/կազմակերպության կողմից ներկայացվել են մեկից ավելի դիտողություններ և առաջարկություններ, դրանք խմբավորվում են ամփոփաթերթի միևնույն հատվածում և համարակալվում են:

23. Հանրային քննարկումների արդյունքում հանրության կողմից ներկայացված դիտողություններից ու առաջարկություններից ամփոփաթերթում ներառվում են միայն ընդունվածները: Ամփոփաթերթում ներառվում են առաջարկության հեղինակի տվյալները, առաջարկության ստացման օրը: Անհատներից ստացված առանցքային և նույնաբովանդակ կարծիքները կարող են առանցքային, ընդհանուր գծերով խմբավորվել «*Մի խումբ անձանց կողմից ներկայացված դիտողություններ և առաջարկություններ*» վերտառությամբ:

24. Ծրագրի նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթը ներկայացվում է հետևյալ ձևաչափով.

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
--

h/h	Առաջարկության հեղինակը, գրության օրը, ամիսը, տարին, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1.	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն 21.06.2013թ., № ՊՆ/310-504 գրություն	Առաջարկություններ չկան:		
2.	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն 28.06.2012թ. № 4/4.3-2/80845-11 գրություն	1. Խնդիր 1.1. 3-րդ կետում ...:	Չի ընդունվել:	Գտնում ենք, որ նախագծի ... :
		2. Խնդիր 2.2. 4-րդ կետում ... :	Ընդունվել է մասնակի:	Դրույթը վերաշարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «.....»
		3. Խնդիր 4.1. անհրաժեշտ է....»	Ընդունվել է:	Խնդիրը վերախմբագրվել է:

25. Ծրագրի նախագիծը մշակող աշխատանքային խումբը ստացված առաջարկությունների, դիտողությունների վերլուծության և ամփոփման արդյունքներով Ծրագրի նախագծում կատարում է անհրաժեշտ լրամշակումներ՝ տասնհինգօրյա ժամկետում Ակադեմիայի ինտերնետային կայքում տեղադրելով՝

1) լրամշակված նախագիծը,

2) ամփոփաթերթը:

Ամփոփաթերթում ներառվում են հանրային քննարկումների արդյունքում ստացված միայն այն դիտողությունները և առաջարկությունները, որոնք ընդունվել են:

5. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ, ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

26. Ծրագրի նախագիծը շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցնելուց, հանրային քննարկումներ կազմակերպելուց, դրանց արդյունքներն ամփոփելուց և անհրաժեշտության դեպքում նախագիծը լրամշակելուց հետո ներկայացվում է Ակադեմիայի գիտական խորհուրդ՝ քննարկման և գիտական խորհրդի կողմից հավանության արժանանալու համար:

27. Քննարկման արդյունքում Ակադեմիայի գիտական խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) հավանություն տալ առաջարկվող Ծրագրին և այն ներկայացնել Ակադեմիայի Խորհրդի հաստատմանը,

2) լրամշակել Ծրագրի նախագիծը և կրկին ներկայացնել՝ հաշվի առնելով քննարկման արդյունքում արված դիտողություններն ու առաջարկությունները:

28. Ծրագրի նախագիծը Ակադեմիայի գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնելուց կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, նյութեր:

29. Ակադեմիայի գիտական խորհրդի հավանությանն արժանացած Ծրագրի նախագիծը հնգօրյա ժամկետում ներկայացվում է Ակադեմիայի Խորհրդի հաստատմանը:




30. Ակադեմիայի Խորհուրդը՝

1) հաստատում է Ծրագիրը,

2) չի հաստատում Ծրագրի նախագիծը և վերադարձնում է Ակադեմիայի գիտական խորհուրդ՝ համապատասխան առարկություններով:

31. Եթե Ծրագրի նախագծի հաստատումը մերժվել է, նորից Խորհրդի հաստատման կարող է ներկայացվել սույն ընթացակարգով սահմանված կարգով՝ Ծրագրի նախագծի հաստատումը մերժելու համար հիմք դարձած պատճառները վերացվելուց հետո:

32. Ծրագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարվում են՝ սույն ընթացակարգով սահմանված կարգով:



Ծանոթություն.

3-րդ կետ

Ակադեմիայի գիտական խորհուրդը Ծրագրի նախագիծը կարող է վերադարձնել աշխատանքային խմբին՝ խմբագրելու, թերությունները վերանայելու կամ լրամշակելու հանձնարարականով:

6-րդ կետ

Ակադեմիայի գիտական խորհուրդը Ծրագրի նախագիծը կարող է վերադարձնել աշխատանքային խմբին՝ լրամշակելու հանձնարարականով:

7-րդ կետ

Եթե Ծրագրի նախագծի հաստատումը մերժվում է Խորհրդի կողմից, ապա այն վերադարձվում է Ակադեմիայի գիտական խորհուրդ՝ համապատասխան առարկություններով:

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման

ակադեմիայի գիտական խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 28 -ի նիստում

(արձանագրություն N 99)